

պարտաւորուած է յարմարիլ արդի կենաց պահանջներուն՝ որ կը պարտադրէ բացարձակ համառօտախօսութիւնը:

Հասկնալու համար այս մեծ ու արմատական կերպարանափոխութիւնը՝ պէտք է կարգաւ հինքրուն գործերն ու զանոնք բազմատեղ ժամանակակից բանաստեղծներուն գործերուն հետ:

Սիրոյ նուրբ մտածութիւն մը, բնական երևոյթի մը կամ գեղեցիկ իրի մը նկարագրութիւնը՝ հին բանաստեղծներու համար նուազի մը կամ ամբողջ երգի մը նիւթեր էին. ընդհակառակն այսօր մի և նոյն զաղափարը կ'արտայայտուի տաղի մը կամ վեցեակի մը մէջ մեծագոյն ազդեցութեամբ և յստակութեամբ, արդի բանաստեղծութիւնը վերջապէս յաջողած է ազատուելու երկարաբանութենէ:

Նաև պատկերները, որ ամէն բանաստեղծութեան զարդարանքի մասը կը կազմեն, հիմայ աւելի ճիշտ են, աւելի զաղափարին հետ կապ ունեցող՝ զոր անոնք կը պարզաբանեն. կը տեսնուի վերջապէս ժամանակակից բանաստեղծին մէջ զիտական զարգացման ազդեցութիւնը՝ որ ամէն տեղ ընդհանրացած է:

Բանաստեղծը կ'երգէ միշտ մի և նոյն կրքերը, կը բացատրէ նոյն երևոյթները, կը նկարագրէ նոյն գեղեցկութիւնները, բայց կը կատարէ զայն իրականին հետ պատշաճ կերպով մը, վասն զի իր գործածած նիւթն աւելի հարուստ ու աւելի այլազան է, նմանութիւնն աւելի հրապուրիչ, երաժշտութիւնն աւելի քաղցրանուազ:

Պիտութիւնն իրեն առջև բացած է ամենալայն ու չհետազօտուած ասպարէզ մը՝ զոր հին աշխարհը չէր ճանչնար, և պատմութիւնը հայթայթած է իրեն ստոյգ գիւցազներու լեզոն մը, այնպէս որ ան կրցած է թաղել ուրախութեամբ զառամած դիցաբանութեան աստուածներն ու կիսաստուածները:

Երեան եկած է ուրեմն աւելի ճշմարիտ, աւելի ճաշակաւոր ու մանաւանդ դաստիարակութեան աւելի յարմար արուեստ մը, վասն զի հաստատուած է ոչ եթէ առաս-

պելին՝ այլ ճշմարտութեան վրայ. կը հռչակէ ոչ եթէ դիքը՝ այլ մարդը:

Ուստի ինծի հաւաստի կը թուի՝ որ բանաստեղծութիւնը կը յայտնէ դարէ ի դար ժամանակամիջոցի մը հոգեկան վիճակը, և նաև այս ալ, ինչպէս ամէն ինչ որ մարդկային է, կը զիջանի ու կը յարմարի զայն արտադրող սերնդոց պահանջներուն:

Ձի կրնար ըսուիլ՝ թէ հին բանաստեղծութիւնն աւելի պատուական ըլլայ քան արդի բանաստեղծութիւնը, և ոչ ալ կարելի է նախագուշակել թէ ապագայ բանաստեղծութիւնը լաւագոյն կամ չարագոյն ըլլայ հիմակուանէն. կարելի է միայն ստուգութեամբ հաստատել թէ ան՝ ամէն ժամանակի մէջ, ամէն տեղոյ մէջ, եղած է ու պիտի ըլլայ հարազատ դուստրը ժամանակին ու ազգին որ զինքը յառաջ բերաւ:

A. PADOVAN

Թարգմ. Հ. Ս. ՏԵՐ-ՄՈՎՍԵՅԱՆ

Մ Տ Ք Ե Ր

— Կուսակցութիւնները անբաժան չարիք մ'են ազատ կառավարութիւններու համար. — ԴԸ ՏՈԿԸՎԻԼ:

— Մ'եր նախանձը աւելի տեսական է քան անոնց երջանկութիւնն որոնց դէմ կը նախանձինք. — ԼԱ ՌՕՇՖՈՒԿՈԼ:

— Հասարակական կարծիքը աշխարհը թագուհին է, վասն զի յիմարութիւնն ալ յիմարներու թագուհին է. — ՊԱՍԿԱԼ:

